



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԳ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեծյունյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, և Սիմոն Բարայանի,

քննության առնելով ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամների լիազորությունների դադարեցման և նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 01.03.2012թ. թիվ 10/10-Ա որոշմամբ երկու տարի ժամկետով կազմավորվել է Պալատի որակավորման հանձնաժողով, հետևյալ կազմով՝

1. Ռուբեն Սահակյան, Պալատի նախագահ, Հանձնաժողովի նախագահ,
2. Անահիտ Եսայան, փաստաբան,
3. Մոնիկա Հակոբյան, փաստաբան,
4. Ռուզաննա Հովհաննիսյան, փաստաբան,
5. Ալեյտնակ Պողոսյան, փաստաբան,
6. Ռուբեն Մելիքյան, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
7. Գառնիկ Սաֆարյան, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
8. Ելիզավետա Դանիելյան, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:

28 հոկտեմբեր 2013թ.

թիվ 28/1-Ա

ք.Երևան

Պալատի խորհրդի 30.04.2013թ. 10/4-Ա որոշմամբ Ալետնակ Պողոսյանի փոխարեն Պալատի հանձնաժողովի անդամ է նշանակվել փաստաբան Հովհաննես Բուրմանյանը:

Պալատի որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամները դիմել են Պալատի նախագահին խնդրելով իրենց ազատել որակավորման հանձնաժողովի անդամի պարտականություններից:

Պալատի կանոնադրության 18.4 կետի հիմքով Պալատի նախագահը Պալատի խորհրդին է առաջադրել հետևյալ փաստաբանների թեկնածությունները՝

1. Հունան Տեր-Վարդանյան- իրավաբանական գիտությունների թեկնածու,
2. Արսեն Սարգսյան - իրավաբանական գիտությունների թեկնածու,
3. Մանե Կարապետյան- իրավաբանական գիտությունների թեկնածու,
4. Սեդրակ Ասատրյան- իրավաբանի դիպլոմավորված մասնագետ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված ժամկետով՝ ութ անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ՝**

1) փաստաբանների պալատի նախագահը, որն ի պաշտոնե որակավորման հանձնաժողովի նախագահն է, և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված չորս անդամ.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից մեկ գիտնական իրավաբան՝ այդ հաստատության ղեկավարի ներկայացմամբ.

4) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ:

Պալատի կանոնադրության 18.2 կետի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ երկու տարի ժամկետով...:**

Ելնելով վերոգրյալից,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվել է 01.03.2012թ.՝ երկու տարի ժամկետով, մինչև 01.03.2014 թվականը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 (4), 18.2, 18.4 կետի պահանջներով,

Պալատի խորհուրդը միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. *Պալատի որակավորման հանձնաժողովի փաստաթղթի անդամներ՝ Մոնիկա Հակոբյանի, Հովհաննես Բուրմանյանի, Ռուզաննա Հովհաննիսյանի և Անահիտ Եսայանի լիազորությունները դադարեցնել:*

2. *Պալատի որակավորման հանձնաժողովի փաստաթղթի անդամներ ընտրել՝ Հունան Տեր-Վարդանյանին, Արսեն Սարգսյանին, Մանե Կարապետյանին և Սեդրակ Ասատրյանին:*

3. *Կազմավորել Պալատի որակավորման հանձնաժողով մինչև 01.03.2014 թվականը՝ հետևյալ կազմով՝*

1. **Արա Զոհրաբյան**, ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ,
2. **Հունան Տեր-Վարդանյան**, ի.գ.թ., փաստաբան,
3. **Արսեն Սարգսյան**, ի.գ.թ., փաստաբան,
4. **Մանե Կարապետյան**, ի.գ.թ., փաստաբան,
5. **Սեդրակ Ասատրյան**, փաստաբան,
6. **Ռուբեն Մելիքյան**, ի.գ.թ., ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
7. **Գառնիկ Սաֆարյան**, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող,
8. **Ելիզավետա Դանիելյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:

4. *Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազենել Պալատի որակավորման հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև սույն որոշումը հրապարակել Պալատի կայքէջում:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

28 հոկտեմբեր 2013թ.

թիվ 28/1-Ա

ք.Երևան